

**ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝ Կոստվոյի անկախության հռչակագրի օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության ազդեցությունը ինքնորոշման իրավունքի վրա: Ի՞նչ է առաջարկում դատարանի եզրակացությունը Արցախյան հիմնահարցի կարգավորման տեսանկյունից:**

*Հևոն Գևորգյան, Հարությունյան և գործընկերներ փաստաբանական գրասենյակ՝ իրավաբան, Երևանի պետական համալսարան՝ ասպիրանտ, Վաշինգտոնի իրավաբանական քոլեջ (Washington College of Law)՝ մագիստրոս (LLM)*

Երևի բոլորն են հիշում, թե որքան մեծ էին միջազգային հանրության ակնկալիքները ՄԱԿ-ի դատարանի՝ Կոստվոյի անկախության հռչակագրի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության կապակցությամբ, և թե որքան մեծ էր ոգևորությունը եզրակացությունը կայացնելուց անիմջապես հետո: Այդ օրերին բոլոր լրատվական միջոցները խոսում էին այն մասին, որ ինքնորոշման իրավունքը վերջապես հաղթանակեց, որ ձևավորվեց նախադեպ, որ ստեղծվեց բանաձև բոլոր պատմական էթնիկ կոնֆլիկտները միատեսակ լուծելու համար: Սակայն այդ ոգևորության ալիքը շատ շուտ անհետացավ, որովհետև եզրակացության առավել ուշադիր ընթերցումը բացահայտեց Դատարանի նեղ մոտեցումը: Դատարանը պարզապես նշեց, որ ոչ պետական կազմավորումները կաշկանդված չեն պետությունների տարածքային ամբողջականությունը հարգելու պարտավորությամբ, հետևաբար՝ անկախության հռչակագրեր ընդունելն ինքնին չի հակասում միջազգային իրավունքին, կամ ավելի ճիշտ միջազգային իրավունքն անկողմնակալ է անկախության հռչակագրերի նկատմամբ:

Սակայն միջազգային նորմերը չեն գործում մեկուսացված միջավայրում. դրանք սերտորեն փոխկապված են միմյանց հետ: Անկախության հռչակագիրը միայն առաջին քայլն է պետականության ստեղծման ճանապարհին: Հետևաբար առաջանում են մի շարք հարցեր: Իսկ, ազա՞տ են երրորդ պետությունները ճանաչել Կոստվոն, ազա՞տ են նրանք դիվանագիտական և տնտեսական հարաբերություններ հաստատել Կոստվոյի հետ, և եթե տարածքային ամբողջականությունը հարգելու պարտավորությունը գործում է միջպետական հարթությունում միայն, չե՞ն խախտել Կոստվոն ճանաչած պետությունները Սերբիայի տարածքային ամբողջականությունը հարգելու իրենց պարտավորությունը:

Նման արգելքի առկայության պարագայում Կոստվոյի պետականությունը դատապարտված կլիներ ոչնչացման անկախ իր անկախության հռչակագրի օրինականությունից, քանի որ այն պարզապես չէր լինի կենսունակ միջազգային հանրությունից մեկուսացված լինելու պատճառով: Ահա այս էական հարցին է, որ դատարանը խուսափեց տալ պատասխան:

Այլ խոսքերով Դատարանի եզրակացությունը նման մի իրավիճակի, որում մենք հարցնում ենք ներպետական դատարանին, թե արդյոք արդարացված ինքնապաշտպանություն է հարձակում գործադրած անձին քարով հարվածելը, իսկ դատարանը մեզ տալիս է պատասխան, թե քրեական իրավունքում ոչինչ չի արգելում քար բարձրացնել և նետելը: Համատեքստից դուրս քար նետելու արգելված չլինելու հանգամանքը մեզ գրեթե ոչինչ չի տալիս:

Սակայն դատարանի խորհրդատվական եզրակացությունն ավելի ուշադիր ընթերցելիս, մենք տեսնում ենք, որ Դատարանը տվել է մի շարք հուշումներ՝ իմ կարծիքով քողարկված ասելով այն ամենը, ինչ չի կարողացել արտահայտել ուղղակիորեն, քաղաքական ներուժի բացակայության պատճառով:

**Առաջին:** Միջազգային դատարանը մի քանի անգամ իր խորհրդատվական եզրակացությունում օգտագործում է «Կոսովոյի ժողովուրդ» ձևակերպումը: Իսկ ժովովուրդը հենց ինքնորոշման իրավունքի, այսինքն պետություն ստեղծելու իրավասությամբ օժտված սուբյեկտն է: Սրա հակառակ պնդումը իհարկե կարող է լինել այն, թե ժողովուրդը կարող է իրականացնել այդ ինքնորոշումը նաև մայր պետության սահմաններում՝ ներքին ինքնորոշման միջոցով:

Այստեղ անհրաժեշտ է մի փոքր պարզաբանում: Իրավաբանական գրականության մեջ իրոք երբեմն խոսում են արտաքին ինքնորոշման և ներքին ինքնորոշման իրավունքների մասին: Սակայն համապատասխան պայմանագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երկու իրավունքների սուբյեկտներն իրականում տարբեր են:

Այսպես ՄԱԿ-ի կանոնադրության նախաբանը սկսվում է հետևյալ խոսքերով՝ «մենք՝ միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդներս...», սակայն դրա հետ մեկտեղ կազմակերպության անդամներ կարող են լինել միայն պետությունները: Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը, որը շատ հաճախ որակվում է որպես ՄԱԿ-ի կանոնադրության հեղինակավոր մեկնաբանություն, խոսում է այն պետությունների մասին որոնք ունեն կառավարություն, որը ներկայացնում է պետության տարածքի ողջ ժողովուրդը՝ օգտագործելով «ժողովուրդ» եզրույթը եզակի, այլ ոչ թե հոգնակի թվով: Իսկ ահա Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը անդրադառնում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքին և ազգային փոքրամասնությունների իրավունքներին երկու առանձին հոդվածներում՝ 1-ին և 27-րդ: Առավել քան հատկանշական է նաև Դաշնագրի հիման վրա ստեղծված Մարդու իրավունքների կոմիտեի գործունեությունը, որը երբեք ազգային փոքրամասնությունների ինքնավարության խնդիրը չի քննարկել 1-ին հոդվածի, այսինքն ինքնորոշման իրավունքի լույսի ներքո: (Sandra Lovelace v. Canada, Communication No. R.6/24, UN Doc. Supp. No. 40 (A/36/40), at 166 (1981), at para. 7.2; Ivan Kitok v. Sweden, Communication No. 197/1985, CCPR/C/33/D/197/1985 (1988), at para. 6.3)

Եզրակացությունը առավել քան ակնհայտ է. պետությունը չի կարող ունենալ ժողովուրդներ, պետությունը ունի ժողովուրդ: Իսկ ժողովուրդը պետություն ստեղծելու իրավասությամբ օժտված մարդկանց խումբն է, կամ արդեն կայացած պետության բնակչությունը, որն ունի սեփական պետականությունը պաշտպանելու և, միգուցե նաև, իր համար ցանկալի պետական կառավարման համակարգ ընտրելու իրավունք:

*Ինչ վերաբերվում է ներքին ինքնորոշմանը, կամ այսպես կոչված ինքնավարություն ստեղծելու իրավունքին, ապա այն վերաբերվում ազգային փոքրամասնություններին, այլ ոչ թե ժողովուրդներին: Առավել քան հատկանշական է այս տեսանկյունից Առևտրի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված Անկախ պետությունների տարածքում բնիկ ժողովուրդների կամ ցեղային կյանք վարող ժողովուրդների մասին կոնվենցիան, որը թեև օգտագործում է ժողովուրդը եզրույթը, ինքնավարության մասին խոսելիս, սակայն առաջին իսկ հոդվածում նշում է, որ եզրույթն օգտագործված չէ իր միջազգային իրավական իմաստով:*

Այս հստակ տարանջատումը, որն առկա է միջազգային փաստաթղթերում, շատ հաճախ մատնվում է մոռացության՝ հնարավորություն տալով օրինական տիտղոս չունեցող մետրապոլիսներին պնդել, թե ինքնորոշման իրավունքը չի ենթադրում անջատում և, որ այն կարող է իրականացվել նաև ներքին ուղիներով՝ այսպիսով փոքրացնելով ինքնորոշման իրավունքի իրական նշանակությունը:

Նման պայմաններում Միջազգային դատարանի կողմից «Կոսովոյի ժողովուրդ» ձևակերպման շարունակական օգտագործումը առավել քան պատահական չէ: Դատարանն անընդհատ կրկնում է նույն ձևակերպումը կարծես, թե ցույց տալով ընթերցողին, որ «այո դու չես սխալվել, ես իրոք ասում եմ ԿՈՍՈՎՈՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ»:

Ավելին միջազգային իրավունքի *jura novit curia* (այսինքն՝ դատարանը ծանոթ է իրավունքին) սկզբունքի համաձայն մենք պետք է ելնենք Դատարանի կողմից իրավական եզրույթների ճիշտ մեկնաբանման կանխավարկածից:

*Այս տեսանկյունից սեցեսիան որպես իրավունքի պաշտպանության միջոց հասկացությունը ըստ էության իրենից ներկայացնում է որոշակի դուռ, ճանապարհ, որի միջոցով վտանգված ազգային փոքրամասնությունը, սեփական գոյությունը պահպանելու նպատակով ձեռք է բերում պետություն ստեղծելու իրավունք, այսինքն վեր է ածվում ժողովուրդի:*

**Երկրորդ:** Ինչպես նշեց Միջազգային դատարանը, տարածքային ամբողջականության սկզբունքը գործում է միայն միջպետական հարթությունում: Ասկայն անգամ այս պարագայում, մենք միևնույն է պետք է հստակ պատկերացնենք այդ սկզբունքի կողմից առաջացող համապարտադիր վարքագծի կանոնները՝

հասկանալու համար, թե արդյոք երրորդ պետություններն իրոք պարտավորված են չճանաչել մայր պետությունից անջատված ոչ-պետական-կազմավորումները: Հատկանշական է, որ տարածքային ամբողջականության սկզբունքի մասին խոսելիս Դատարանը վկայակոչում է նախևառաջ ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 2(4)-ը, որը վերաբերվում է տարածքային ամբողջականության դեմ ուժ գործադրելուն: Սա հատկապես կարևոր է, եթե մենք հաշվի առնենք, որ Կոստովոյի գործով լսումների ժամանակ մի շարք պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Ֆինլանդիան, Բուլղարիան, Հորդանանը, պնդում էին, որ տարածքային ամբողջականությունը հարգելու պարտականությունը գործում է միայն ուժի գործադրման արգելքի համատեքստում:

*Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* իհարկե խոսում է այն մասին, որ «պետությունների տարածքային ամբողջականությունը անձեռնմխելի է» և որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այլ պետությունների իրավասուբյեկտությունը»: Սակայն նշանակում է դա արդյոք, որ պետությունները պարտավոր են չճանաչել նորաստեղծ կազմավորումները, նախքան մայր պետության կողմից ճանաչվելը: Կա՞ արդյոք այդ կապակցությամբ կայացած պետական պրակտիկա:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նախ նշել, որ սեցեսիայի որպես պաշտպանության միջոցի հասկացությունը նույնպես ամրագրված է *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում*, այսպես կոչված «երաշխավորության դրույթում» (safeguard clause): Դոկտրինի հակառակորդները, սակայն պնդում են, որ թեև այն ամրագրված է *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում* այն միևնույն է չի դարձել սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս՝ պետական պրակտիկայի բացակայության պատճառով: Սակայն արգելող նորմի՝ տարածքային ամբողջականության կայացած լինելը նրանք ընդունում են որպես փաստ: **Եվ հետևաբար մեր հարցն է, իսկ արդյոք կարծրացել է այն նորմը, որը կստիպի երրորդ պետություններին չճանաչել սեցեսիայի դիմած ոչ-պետական-կազմավորումները:** Կա՞ արդյոք այդ կապակցությամբ համընդհանուր պետական պրակտիկա:

Հատկանշական է, որ տարածքային ամբողջականություն ձևակերպումն օգտագործող միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս իրոք օգտագործում են «տարածքային ամբողջականություն» արտահայտությունը ուժի գործադրման համատեքստում: Առաջին նման պայմանագիրը 1856թ. Փարիզի պայմանագիրն է, որը խոսում էր Օսմանյան կայսրության վրա ռազմական հարձակում գործադրելու պարագայում վերջինիս դաշնակից պետությունների կողմից օժանդակություն տրամադրելու մասին: Այնուհետև այն պարբերաբար օգտագործվում է խաղաղության պայմանագրերում (Բրեստ-Լիտովսկ, Եգիպտոս-Իսրայել), ռազմական դաշինքներում, չեզոքության պայմանագրերում և տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների

հիմնադիր պայմանագրերում (Աֆրիկյան դաշինքի կազմակերպություն, Մոնթեֆորտի կոնվենցիան)՝ ամենուրեք ուժի գործադրման համատեքստում:

Ինչ վերաբերվում է ճանաչմանը, կամ ավելի կոնկրետ անջատված միավորումները չճանաչելու ճանապարհով տարածքային ամբողջականությունը հարգելուն, ապա անհրաժեշտ է նշել, որ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* ընդունելուց ընդամենը երկու տարի անց արդեն 47 պետություն ճանաչել էր Բանգլադեշի անկախ պետականությունը, թեև մայր պետությունը՝ Պակիստանը դեռևս նման քայլի չէր դիմել: Այսօր արդեն շուրջ յոթանասուն պետություն ճանաչում է Կոսովոն, թեև Սերբիան շարունակում է հերքել Կոսովոյի անկախությունը:

[Դասական դարձած *Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի վերաբերյալ* վճռում միջազգային դատարանը նշում էր, որ] սովորույթի կարծրացման համար անհրաժեշտ է համընդհանուր և միատեսակ պրակտիկա: Կարելի է արդյոք նման պարագայում խոսել համընդհանուր և միատեսակ պետական պրակտիկայի առկայության մասին: Իհարկե ոչ:

Կրկին անդրադառնանք Դատարանի եզրակացությանը: Ուղղակիորեն նշելով, որ այն չի պատրաստվում անդրադառնալ Կոսովոյի ճանաչման օրինականության հիմնահարցին (պարբ. 51), Դատարանը սակայն այնուհետև անկախության հռչակագրի օրինականության մասին խոսելիս նշում է, որ բոլոր այն դեպքերում, երբ Անվտանգության խորհուրդն անցյալում դատապարտել է անկախության հռչակագրերը, վերջինս դա արել է միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի խախտման առկայության պատճառով:

Հարավային Ռոդեզիան (SC Res. 216, 217), Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (SC Res. 541), Ռեպուբլիկա Սրբասկան (SC Res. 787)

Սակայն Դատարանը չի հիշատակում, որ այդ նույն բանաձևերը ոչ միայն դատապարտում էին անկախության հռչակագրերը, այլ նաև կոչ էին անում պետություններին չճանաչել համապատասխան ոչ պետական կազմավորումների անկախությունը:

Հետևաբար կարելի է ենթադրել, որ եթե Միջազգային Դատարանը առանձնացնում է Հարավային Ռոդեզիայի, Կիպրոսի և Ռեպուբլիկա Սրբասկայի դեպքերը որպես իմպերատիվ նորմերի խախտման դեպքեր, ապա ոչ պետական կազմավորումների կողմից նման խախտումներ չիրականացնելու դեպքում, ոչ միայն այդ նորանկախ սուբյեկտների կողմից անկախության հռչակումը, այլ նաև երրորդ պետությունների կողմից դրանց ճանաչումը նույնպես արդարացված է:

Ի՞նչ եզրակացության է մեզ բերում այս ամենը: Եթե կայացած չէ սեցեսիայի, որպես պաշտպանության միջոցի սովորույթային նորմը, ապա այդ նույն կանոնների

կիրառման պարագայում պետք է ընդունել, որ կայացած չէ նաև արգելող նորմը: Հետևաբար մենք գործ ունենք չկարգավորված դաշտի հետ, որն իրավաբանական գրականությունում անվանվում է նաև *non liquet*: Այս պարագայում, նույն միջազգային դատարանի գործերի համաձայն, առկա է գործողության ազատություն: Միջազգային հանրության կայունության տեսանկյունից իհարկե նման մի շատ կարևոր ոլորտում գործողության ազատությունը կարող էր ունենալ սարսափելի հետևանքներ և, հետևաբար, հենց այստեղ Դատարանը անում է իր վերջին (կրկին թաքնված քայլը) և կարծեք թե իմիջայլոց նշում, որ *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրը* արտացոլում է սովորության միջազգային իրավունքը՝ հղում անելով սեփական՝ *Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ-ի* գործին: Սակայն *Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ-ի* գործի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ վերջինում Դատարանը բոլորովին էլ անվերապահորեն չէր ընդունել հռչակագրի սովորության բնույթը, այլ ճանաչել էր այն միայն որպես *opinio juris*-ի վկայություն: Մինչ դեռ *opinio juris*-ն առանց պրակտիկայի դեռ ոչ մի արժեք չունի: Ուստի Դատարանը իրականացնում է հսկայական և կարծեք թե ոչնչով չարդարացված քայլ առաջ, երբ դա իրեն **կոնկրետ գործով փաստարկման համար**, մասնավորապես անկախության հռչակագրի օրինականության մասին խոսելիս բոլորովին էլ պետք չէր:

Ինչո՞ւ Դատարանը դիմեց այդ քայլի: Եթե մենք ընդունում ենք *Հռչակագիրը* որպես համապարտադիր ընդհանուր միջազգային իրավունքի արտացոլում, ապա մենք պետք է ընդունենք, որ գոյություն ունի պարտավորություն չճանաչելու սեցեսիայի դիմած կազմավորումների պետականությունը, սակայն հստակ բացառությամբ՝ այն է բացառությամբ այն դեպքերի, երբ անջատումն իրականացվում է մարդկության դեմ ուղղված հանցագործություններից, խտրականությունից և էթնիկ գտումներից պաշտպանվելու նպատակով: Քանի որ ինքը *Հռչակագիրը* ամրագրում է պարտավորություն ճանաչելու միայն այն պետությունների տարածքային ամբողջականությունը, **որոնց կառավարությունը ներկայացնում է կառավարվողին**:

Հետևաբար մենք կամ ընդունում ենք *Հռչակագիրը* ամբողջությամբ, և հետևաբար նրանում ամրագրված կանոններից բացի ընդունում ենք նաև այդ կանոնների հստակ ձևակերպված բացառությունները, կամ էլ ստիպված ենք պնդել, որ գործ ունենք չկարգավորված դաշտի հետ, որում որևիցե արգելք գոյություն չունի: Երկու դեպքերում էլ օրինական է դառնում ոչ միայն անջատումը և նոր պետականության ստեղծումը մարդու իրավունքների լայնածավալ խախտումների պարագայում, այլ նաև այդ պետությունների ճանաչումը և նրանց օժանդակություն տրամադրելը ոչ միայն մարդասիրական, տնտեսական, այլ նաև ռազմական ոլորտներում:

Ուստի Կոսովոյի խորհրդատվական եզրակացության իրական արժեքը չի կարելի թերագնահատել:

Մյուս կողմից, երբ մենք խոսում ենք նոր կայացող նորմերի մասին, մեզ անհրաժեշտ է որոշակի լեգիտիմություն, քանի որ ինչպես արդեն նշվեց միջազգային

նորմերը չեն գործում մեկուսացված միջավայրում, կամ իրավական վակուումում և հետևաբար արդյունավետության համար դրանք պետք է օգտվեն այլ նորմերի և սկզբունքների օժանդակությունից:

Այսպես օրինակ, երբ Միջազգային դատարանը գնում է ՄԱԿ-ի քաղաքական մարմինների գործողությունների օրինականությունը այն ստուգում է, թե արդյոք վերջիններս չեն հանդիսանում *ultra vires* Կազմակերպության նպատակներին: Այս տեսանկյունից հատկանշական է, որ ՄԱԿ-ի նպատակները (խաղաղության պահպանում և մարդու իրավունքների պաշտպանություն) հանդիսանում են նաև ողջ միջազգային հանրության կենտրոնական արժեքները:

Անվտանգության Խորհուրդն իր հերթին բազմից ընդգծել է, որ մարդու իրավունքների լայնածավալ խախտումները հանգեցնում են խաղաղության ոտնահարմանը: Ինքը Անվտանգության Խորհուրդը, լինելով միջազգային խաղաղության պահպանման գործառնություն օժտված մարմին, բազմիցս միջամտել է նաև մարդու իրավունքների լայնածավալ ոտնահարումների միջադեպերին՝ նույն Հարավային Ռեդեգիայում, Իրաքում, Հաիթիում և այլն: Հետևաբար ցանկացած միջոց, որն էթնիկ կոնֆլիկտի պարագայում վերջ կտա մարդկային զոհերին, ծառայում է նաև խաղաղության պահպանման նպատակներին:

Պետությունների պատասխանատվության նորմերի ամբողջությունը նախատեսում է, որ իրավախախտ պետությունը պարտավոր է վերջ տալ իրավախախտմանը, տրամադրել նույն խախտումը չկրկնելու երաշխիքներ և անհրաժեշտության դեպքում իրականացնել նաև ռեպարացիա: Իսկ ի՞նչ էթե պետությունը քողարկված նպաստում է իր տարածքում մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրականացմանը, սակայն ոչ ընդունում է դրանք, ոչ էլ տրամադրում չկրկնելու երաշխիքներ: Նման պարագայում սեցեսիան որպես իրավական պաշտպանության միջոց վեր է ածվում ոչ միայն իմպերատիվ նորմի խախտումը դադարեցնելու, այլ նաև տվյալ էթնիկ խմբի գոյությունը երաշխավորելու միջոցի, ինչպես նաև ծառայում որպես արդյունավետ պատասխանատվության միջոց՝ լիովին համահունչ լինելով ոչ միայն միջազգային հանրության և ՄԱԿ-ի կենտրոնական արժեքներին, այլ նաև պետությունների պատասխանատվության մասին միջազգային իրավունքի նորմերին: Վերջիվերջո, այստեղ խոսք է գնում մի կողմից միջազգային իրավունքի *jus cogens* իմպերատիվ նորմերի խախտումները դադարեցնելու, իսկ մյուս կողմից սուվերենության կամ տարածքային ամբողջականության ենթադրյալ կորուստի մասին: Եվ ո՞րն է ավելի կարևոր: Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը բազմիցս նշել է, որ սուվերենության գերադասումը մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելուն ծաղրուծանակի է վերածում իրավունքը: Հատկանշական է նաև, որ Կոստովոյի գործի կապակցությամբ Միջազգային դատարանին ներկայացված պետությունների գրավոր դիրքորոշումներում միայն մեկ պետություն համարձակվեց պնդել, թե տարածքային

ամբողջականությունը հանդիսանում է միջազգային իրավունքի իմպերատիվ *jus cogens* նորմ: Թե որ արժեքներն են առաջնային, հետևաբար ակնհայտ է:

Այստեղ պետք է նաև ասել երկու խոսք, Կոստվոյի միջադեպի այսպես կոչված *sui generis* բնույթի մասին: Իրավիճակը *sui generis* է այնքան ժամանակ, որքան նմանատիպ փաստական հանգամանքները չեն կրկնվում այլ իրավիճակներում: Միջազգային իրավունքը չի գործում *ad hoc* կարգավորման ճանապարհով. վերջինիս կայունության համար անհրաժեշտ է նմանատիպ փաստերի համանման կարգավորում: Ցավոք սրտի, այսօր խոսել մարդու իրավունքների լայնածավալ խախտումների *sui generis* բնույթի մասին բոլորովին էլ հնարավոր չէ: *Sui generis* էին ֆաշիստական գերմանիայի հանցագործությունները, *sui generis* էր Ռուանդա, *sui generis* էր Սրեբրենիցան, և վերջապես միջազգային հանրությունը ստեղծեց Միջազգային քրեական դատարանը՝ հասկանալով, որ *ad hoc* կարգավորումը պարզապես ձեռնտու չէ: Նույն տրամաբանությամբ *sui generis* էր Բանգլադեշը, *sui generis* էր Էրիթրեան, *sui generis* է Կոստվոն, ինչպես նաև Հարավային Օսեթիան, հետևաբար ժամանակն է մոռանալ *ad hoc* կարգավորման մասին և պարզապես ընդունել սեցեսիայի որպես պաշտպանության միջոցի նորմի գոյությունը միջազգային իրավունքում:

Անդրադառնալով մեր իրականությանը՝ գտնում եմ, որ Միջազգային դատարանի՝ Կոստվոյի խորհրդատվական եզրակացությունը ամուր իրավաբանական հող է նախապատրաստել Արցախի ճանաչումը իրականացնելու համար: Ռեպուբլիկա Սրպսկայի, Հարավային Ռոդեզիայի օրինակները չի կարելի համարել պատահական: Միջազգային դատարանի որոշումն ըստ էության ոչ միայն օրինականացնում է անկախության հռչակագրերը, այլև ամրագրում է նաև պետությունների ազատությունը ճանաչել նորաստեղծ պետական կազմավորումները, եթե վերջիններս չեն ստեղծվում իմպերատիվ նորմերի խախտման միջոցով, այսինքն, երբ ինքը անկախացող սուբյեկտը չի ձեռնամուխ լինում ցեղասպանության կամ ագրեսիվ ուժի գործադրման: